Հավելված
ՀՀ կառավարության 2015 թ.
մարտի 10-ի նիստի N 11
արձանագրային որոշման

ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆ հմ.2000000779
ԴՐԱՄԱՇՆՈՐՀ հմ. 2000000780

ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

«Ենթակառուցվածքների և գյուղական ֆինանսավորման աջակցություն» ծրագիր
(ԵԳՖԱԾ)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

և

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ

միջև

Ստորագրված է Հռոմում, Իտալիա

2014թ. Նոյեմբերի 12-ին

ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Փոխառություն հմ.2000000779
Դրամաշնորհ հմ. 2000000780

Ծրագրի անվանումը՝ «Ենթակառուցվածքների և գյուղական ֆինանսավորման աջակցություն» ծրագիր (Ծրագիր)

Հայաստանի Հանրապետությունը (Փոխառու)

և

Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամը (Հիմնադրամ կամ ԳԶՄՀ),

(յուրաքանչյուրը՝ Կողմ, իսկ երկուսը միասին՝ Կողմեր),

ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼՈՎ, ՈՐ.

Ա) Հիմնադրամը համաձայն է ֆինանսավորում տրամադրել Հայաստանի Հանրապետությունում «Ենթակառուցվածքների և գյուղական ֆինանսավորման աջակցություն» ծրագրին աջակցելու նպատակով,

Բ) Փոխառուն մտադրություն ունի Նավթ արդյունահանող երկրների կազմակերպության Միջազգային զարգացման հիմնադրամից (ՆԱԵԿ ՄԶՀ) մոտ քսանհինգ միլիոն Ամերիկայի Միացյալ Նահանգների դոլարի (25 000 000 ԱՄՆ դոլար) չափով ֆինանսական օժանդակություն ստանալ՝ Ծրագրի ֆինանսավորմանն աջակցելու համար,

Գ) Փոխառուն դիմել է ԳԶՄՀ-ին Գլոբալ էկոլոգիական հիմնադրամից (ԳԷՀ) դրամաշնորհային միջոցներ ներգրավելու նպատակով և տրամադրել է դրա համար անհրաժեշտ փոխանցագրերը: Այդ դրամաշնորհային միջոցները հասանելի լինելուն պես նախատեսվում է օգտագործել 2015 թվականին նախագծվող ենթածրագրի համար, որը Կողմերի փոխադարձ համաձայնությամբ ներառվելու է Ծրագրի շրջանակներում: Ակնկալվում է, որ նշված դրամաշնորհային միջոցները կկազմեն մոտավորապես չորս միլիոն երեք հարյուր հազար (4 300 000)ԱՄՆ դոլար:

Դ) Փոխառուն ակնկալում է այլ դոնորներից ստանալ մոտ երկու միլիոն (2 000 000) ԱՄՆ դոլար՝ Ծրագրի ֆինանսավորմանն աջակցելու նպատակով:

ՍՈՒՅՆՈՎ, Կողմերը համաձայնում են հետևյալի մասին.

Բաժին Ա

1. Հետևյալ փաստաթղթերը համատեղ կազմում են սույն Համաձայնագիրը. այս փաստաթուղթը, Ծրագրի նկարագրությունը և իրականացումը (Առդիր 1), Բաշխման աղյուսակը (Առդիր 2) և Հատուկ պայմանները (Առդիր 3):

2. 2009 թվականի ապրիլի 29-ով թվագրված՝ Հիմնադրամի՝ Գյուղատնտեսության զարգացման ֆինանսավորման ընդհանուր պայմանները, որոնք ժամանակ առ ժամանակ կարող են փոփոխվել (այսուհետ՝ Ընդհանուր պայմաններ), ներկայացված են սույն Համաձայնագրին կից, և դրանց բոլոր եզրույթները կիրառվում են սույն Համաձայնագրի նկատմամբ: Սույն Համաձայնագրի նպատակներով՝ Ընդհանուր պայմաններում սահմանված եզրույթներն ունեն դրանում ամրագրված իմաստները:

3. Հիմնադրամը Փոխառուին տրամադրում է Փոխառություն և Դրամաշնորհ (Ֆինանսավորում), որոնք Փոխառուն կօգտագործի՝ Ծրագիրը սույն Համաձայնագրում նշված պայմաններին համապատասխան իրականացնելու համար:

Բաժին Բ

1. Ա. Փոխառության գումարը կազմում է յոթ միլիոն երկու հարյուր հիսուն հազար Հատուկ փոխառության իրավունք (7 250 000 ՀՓԻ):

Բ. Դրամաշնորհի գումարը կազմում է երկու հարյուր երեսունմեկ հազար Հատուկ փոխառության իրավունք (231 000 ՀՓԻ):

2. Փոխառությունը տրվում է 25 տարի ժամկետով, ներառյալ 5 տարի արտոնյալ ժամկետ, 1.25% տարեկան տոկոսադրույքով և 0.75% տարեկան սպասարկման վճարով:

3. Փոխառության սպասարկման վճարի արժույթն է Ամերիկայի Միացյալ Նահանգների դոլարը:

4. Համապատասխան ֆինանսական տարվա առաջին օրը հունվարի 1-ն է:

5. Հիմնական գումարի և սպասարկման վճարի մարումները կկատարվեն Փոխառության յուրաքանչյուր տարվա փետրվարի 1-ին և օգոստոսի 1-ին:

6. Հայաստանի Հանրապետության կենտրոնական գանձապետարանում բացառապես Ծրագրի կողմից տնօրինման նպատակով կբացվի երկու հաշիվ (Նշանակված հաշիվներ), որոնք նախատեսված են ԱՄՆ դոլարով ֆինանսական միջոցները նախապես ստանալու համար, որոնցից մեկը՝ Փոխառության միջոցների (Փոխառության նշանակված հաշիվ), իսկ մյուսը՝ Դրամաշնորհային միջոցների համար (Դրամաշնորհային նշանակված հաշիվ): Նշանակված հաշիվներից ֆինանսական միջոցները կփոխանցվեն ստորև՝ 7-րդ պարբերությունում նկարագրված Ծրագրային հաշիվներին, որոնք տնօրինվում են Ծրագրի իրականացման գրասենյակի (ԾԻԳ), Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի (ՀԳՏՏՋՀ/ՖՐԵԴԱ) և Գյուղական ֆինանսավորման կառույցի (ԳՖԿ) կողմից, ինչպես պահանջվում է Ծրագրի իրականացմամբ և ինչպես նշված է Տարեկան աշխատանքային պլան-բյուջեներում:

7. Փոխառուն Հիմնադրամի համար ընդունելի առևտրային բանկերում կբացի երկու Ծրագրային հաշիվներ, մեկը՝ Փոխառության և մյուսը՝ Դրամաշնորհի համար, ՀՀ դրամով: Փոխառուն նաև կբացի և այդուհետ կվարի ՀՀ դրամով Ծրագրային հաշիվ Կառավարության կողմից Ծրագրի համաֆինանսավորման համար (այսուհետ Կառավարության համաֆինանսավորման Ծրագրային հաշիվ):

7.1. Ընդ որում, Փոխառուն ՀԳՏՏՋՀ-ից և ԳՖԿ-ից կպահանջի ԳՋՄՀ-ի համար ընդունելի բանկերում բացել և վարել հետևյալ հաշիվները.

ա) ՀԳՏՏՋՀ. i) ՀԳՏՏՋՀ-ի մեկ Աճողական ներդրումային հաշիվ ՀՀ դրամով՝ տեղական թիրախային ընկերություններում բաժնեմասային ներդրումներ կատարելու նպատակով Փոխառության նշանակված հաշվից ֆինանսական միջոցներ ստանալու համար, և ii) ՀԳՏՏՋՀ-ի մեկ Ներդրումային հաշիվ ՀՀ դրամով՝ ներդրումային հետվճարումների (դիվիդենտներ և եկամուտներ), վերաներդրումների, գործառնական ծախսերի և Հայաստանի Հանրապետության կառավարությանը՝ փոխառության սպասարկման վճարի կատարման համար:

(բ) ԳՖԿ. i) ԳՖԿ-ի երկու Աճողական վարկային հաշիվներ, որոնցից մեկը՝ ԱՄՆ դոլարով, իսկ մյուսը՝ ՀՀ դրամով՝ համապատասխան արժույթներով վարկավորման նպատակով Փոխառության նշանակված հաշվից ֆինանսական միջոցներ ստանալու համար, և ii) ԳՖԿ-ի երկու Շրջանառու միջոցների հաշիվներ, որոնցից մեկը՝ ԱՄՆ դոլարով, իսկ մյուսը՝ ՀՀ դրամով՝ վարկային գործունեությունից ստացված հետվճարումների, վերավարկավորման, գործառնական ծախսերի և Հայաստանի

Հանրապետության կառավարությանը՝ փոխառության սպասարկման վճարի կատարման համար:

8. Փոխառուն կտրամադրի համաֆինանսավորում 3.589 մլն ԱՄՆ դոլարին համարժեք դրամի չափով Ծրագրի Գյուղական տարածքների ջրամատակարարման և ոռոգման ենթակառուցվածքների բարելավում (ԳՏՋՈԵԲ) բաղադրիչի, ինչպես նաև տուրքերի և հարկերի վճարման համար:

Բաժին Գ

1. «Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկը հանդիսանում է Ծրագրի գլխավոր գործակալությունը (ԾԳԳ):

2. Ծրագրի լրացուցիչ կողմեր են նշանակվում.

ա) ԳՖԿ-ն, ինչպես նկարագրված է սույն Համաձայնագրի Առդիր 1-ի 7.1 պարբերությունում, և
բ) ՀԳՏՏՋ-ն, ինչպես նկարագրված է սույն Համաձայնագրի Առդիր 1-ի 7.2 պարբերությունում:

3. Ծրագրի ավարտի օրն է համարվում սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվա վեցամյակը:

Բաժին Դ

Ծրագիրը վերահսկվելու է ԳՋՄՀ-ի կողմից, բացառությամբ Առդիր 1-ի 8-րդ պարբերությունում նկարագրված Գյուղական տարածքների ջրամատակարարման և ոռոգման ենթակառուցվածքների բարելավում (ԳՏՋՈԵԲ) բաղադրիչի, որը կվերահսկվի Նավթ արդյունահանող երկրների կազմակերպության միջազգային զարգացման հիմնադրամի (ՆԱԵԿ ՄՋՀ) կողմից: ԳՋՄՀ-ի տրամադրած փոխառությունը և դրամաշնորհը պետք է կառավարվեն ԳՋՄՀ-ի կողմից, իսկ ՆԱԵԿ ՄՋՀ-ի տրամադրած փոխառությունը՝ ՆԱԵԿ ՄՋՀ-ի կողմից:

Բաժին Ե

1. Հետևյալը հանդիսանում է սույն Համաձայնագրի կասեցման լրացուցիչ հիմք. ա) ԳՖԿ-ն կամ ՀԳՏՏՋՀ-ը փոխել են իրենց ներդրումային ուղեցույցները կամ ինստիտուցիոնալ կառուցվածքը՝ առանց նախօրոք ԳՋՄՀ-ի համաձայնությունը ստանալու, բ) չի ստացվել ԳՋՄՀ-ի և ՆԱԵԿ ՄՋՀ-ի նախնական հաստատումը ՆԱԵԿ

ՄՋՀ-ի կողմից Ծրագրով ֆինանսավորվող Գյուղական տարածքների ջրամատակարարման և ոռոգման ենթակառուցվածքների բարելավում (ԳՏՋՈԵԲ) բաղադրիչի որևէ ենթածրագրի ընտրության համար:

2. ա) Գումարների տրամադրման լրացուցիչ ընդհանուր նախապայմանները հետևյալն են.

I. ԾԻԳ-ի՝ որպես Ծրագիրն իրականացնող գրասենյակի հաստատման մասին Կառավարության որոշում պետք է ընդունվի Առդիր 1-ի 6-րդ պարբերության համապատասխան:
II. Ծրագրի իրականացման ձեռնարկը (ԾԻՁ) պետք է հաստատված լինի ԳՋՄՀ-ի կողմից, և
III. Ծրագրի ղեկավար խորհուրդը (ԾՂԽ) ինչպես նկարագրված է Առդիր 1-ի 5-րդ պարբերությունում:

բ) Գումարների տրամադրման լրացուցիչ հատուկ նախապայմանները հետևյալն են.

I. Որևէ ֆինանսական միջոց չպետք է տրամադրվի Ներդրումային կապիտալ կատեգորիայի շրջանակում՝ Գյուղական ֆինանսավորման բաղադրիչի ֆինանսավորման նպատակով, քանի դեռ.

1) ԾԻԳ-ը ՀԳՏՏՋՀ-ի հետ չի կնքել Շրջանակային համաձայնագիր, և Շրջանակային համաձայնագիրը չի ստացել ԳՋՄՀ-ի հավանությունը,

2) Փոխառուն ԳՖԿ-ի հետ չի ստորագրել Փոխըմբռնման հուշագիր, և այդ Փոխըմբռնման հուշագիրը չի ստացել ԳՋՄՀ-ի հավանությունը,

3) Փոխառուն ՀԳՏՏՋՀ-ի հետ չի կնքել Սուբսիդավորման համաձայնագիր, և այդ Սուբսիդավորման համաձայնագիրը չի ստացել ԳՋՄՀ-ի հավանությունը,

4) ԳՋՄՀ-ը չի տվել իր համաձայնությունը ՀԳՏՏՋՀ-ի և ԳՖԿ-ի՝ ներդրումային ուղեցույցներին, որոնք պետք է թարմացվեն ելնելով այս Ծրագրի պահանջներից

5) ԳՋՄՀ-ը չի ստացել փաստաթղթեր, որոնք վկայում են ՀԳՏՏՋՀ-ի Աճողական ներդրումային հաշվի և ԳՖԿ-ի երկու Աճողական վարկային հաշիվների բացման մասին, ինչպես նշված է վերը՝ Բաժին Բ-ի 7.1 պարբերությունում, և որոնցում նշված են այն անձանց անունները/պաշտոնները, ովքեր լիազորված են տնօրինելու այդ հաշիվները:

3. ԾԻԳ-ի, ՀԳՏՏԶՀ-ի և ԳՖԿ-ի միավորման , լուծարման կամ ինստիտուցիոնալ կառուցվածքում այլ էական փոփոխությունների դեպքում վերջիններիս՝ Ծրագրի իրականացմանն առնչվող պարտականությունները պետք է ստանձնեն նրանց իրավահաջորդները կամ այլ կառույցներ, որոնք կստանձնեն նրանց իրավունքներն ու պարտականությունները Սույն Համաձայնագրի իրականացման նպատակով՝ նախապես ԳԶՄՀ-ի համաձայնությունը ստանալու պարագայում:

4. Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում այն օրը, երբ Հիմնադրամը ծանուցում է ստանում Հայաստանի Հանրապետության կողմից Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներքին ընթացակարգերի ավարտի մասին՝ համաձայն Հայաստանի Հանրապետության օրենսդրության:

5. Ստորև նշված են նշանակված ներկայացուցիչները և հասցեները, որոնց միջոցով կկատարվի սույն Համաձայնագրին վերաբերող ցանկացած հաղորդակցություն:

Փոխառուի կողմից՝

Ֆինանսների նախարար
Ֆինանսների նախարարություն
Մելիք-Ադամյան 1
Երևան 0010
Հայաստանի Հանրապետություն

Հիմնադրամի կողմից՝

Նախագահ
Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամ
Վիա Պաոլո դի Դոնո 44
00142 Հռոմ, Իտալիա

2014 թ. նոյեմբերի 12-ով թվագրված սույն Համաձայնագիրը կազմվել է անգլերենով՝ վեց (6) բնօրինակով, որոնցից երեքը (3) տրվում են Հիմնադրամին, մյուս երեքը (3)՝ Փոխառուին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

_____

Արմեն Հարությունյան
ՀՀ գյուղատնտեսության փոխնախարար

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

_____

Միշել Մորդասինի, փոխնախագահ,
նախագահ Կանայո Ֆ. Նվանզեի անունից

Առդիր 1

Ծրագրի նկարագրությունը և իրականացումը

I. Ծրագրի նկարագրությունը

1. *Թիրախային խումբը:* Ծրագրի շահառուներն են աղքատ ֆերմերները և տնտեսությունները, որոնք զբաղվում են գյուղատնտեսությամբ՝ օգտվելով ոռոգման հին կամ ոչ արդյունավետ համակարգերից: Գյուղական ֆինանսավորման բաղադրիչի թիրախային խումբը կկազմեն աղքատ ֆերմերային ընտանիքները, միկրո, փոքր և միջին գյուղատնտեսական և գյուղական ձեռնարկությունների փաստացի և պոտենցիալ սեփականատերերը և աշխատողները՝ հատուկ ուշադրություն դարձնելով գյուղաբնակ աղքատ կանանց և երիտասարդների տնտեսական զարգացմանը: Ենթակառուցվածքների բաղադրիչի իրականացման աշխարհագրական տարածք կհանդիսանան Փոխառուի տարածքում հետևյալ յոթ վարչական բաժանումները ՝ Շիրակի, Լոռու, Տավուշի, Գեղարքունիքի, Վայոց Ձորի, Սյունիքի և Արագածոտնի մարզերը, մինչդեռ Գյուղական ֆինանսավորման բաղադրիչը կիրականացվի երկրի ամբողջ տարածքում՝ հատուկ ուշադրություն դարձնելով Ենթակառուցվածքների բաղադրիչի աշխարհագրական տարածքին (այսուհետ, Ծրագրի իրականացման տարածք):

2. *Նպատակը*: Ծրագրի նպատակն է բարելավել բնակչության տնտեսական և սոցիալական կարգավիճակը Ծրագրի իրականացման տարածքում, որտեղ աղքատությունը գերիշխող է, ստեղծելով եկամտի աճի և զբաղվածության կայուն հնարավորություններ՝ գյուղատնտեսական արտադրական համակարգերի հզորացման և արժեշղթայի օղակների միջև կապի խթանման միջոցով, որոնք աջակցություն կստանան Ծրագրի շրջանակներում

3. *Խնդիրները:* Ծրագրի խնդիրն է աջակցել թիրախային բնակչությանը՝ i) բարձրացնելով փոքր տնտեսությունների ու հետարտադրական գործընթացների արդյունավետությունը, և փոքր տնտեսություններ վարող շահառուների՝ բարձրարժեք ապրանքային մշակաբույսերի աճեցմանն անցնելու միջոցով, (ii) կայուն կապ հաստատելով ագրո-վերամշակող կառույցների և փոքր տնտեսություն վարող աղքատ ֆերմերների միջև՝ տեղական և միջազգային շուկաների հասանելիության և զբաղվածության հնարավորությունների բարելավման համար, (iii) բարելավել անձրևացման համակարգերը նպաստելով գյուղատնտեսական արտադրության համակարգերի զարգացմանը և (iv) բարելավելով ելով սննդի անվտանգությունը և ընտանիքի առողջությունը:

4. *Բաղադրիչները*: Ծրագիրը բաղկացած է հետևյալ բաղադրիչներից.

4.1 **<u>Գյուղական ֆինանսավորման բաղադրիչ:</u>** Այս բաղադրիչը ներառում է.

(i) <u>ԳՖԿ վերաֆինանսավորում:</u> Ծրագիրը ԳՖԿ-ի միջոցով մասնակից ֆինանսական հաստատություններին կտրամադրի ֆինանսական միջոցներ, որոնք վարկերի տեսքով կուղղվեն փոքր տնտեսություն վարողներին, ինչպես նաև փոքր և միջին ձեռնարկություններին իրենց գործունեության բարելավման և եկամուտների ավելացման նպատակով:

(ii) <u>ՀԳՏՏՋՀ ներդրումներ:</u> Ծրագիրը ՀԳՏՏՋՀ-ի միջոցով կաջակցի աղքատ գյուղական արտադրողների հետ ամուր կապեր ունեցող գյուղատնտեսական արժեշղթայի շրջանակներում գործող փոքր և միջին մասնավոր ընկերություններին ներդրումների և ենթավարկերի, ինչպես նաև տարբեր տեսակի կառավարման և տեխնիկական աջակցության տրամադրմանը:

4.2 **Գյուղական տարածքների ջրամատակարարման և ոռոգման ենթակառուցվածքների բարելավում (ԳՏՋՈԵԲ) բաղադրիչ:** Այս բաղադրիչը ներառում է.

(i) <u>Գյուղական համայնքների ջրամատակարարում (ՀՋ):</u> Ծրագիրը, հիմնվելով պահանջարկի վրա հիմնված ծրագրային մոտեցման վրա, կապահովի խմելու ջրի, ինչպես նաև անասունների ջրարբիացման և տնամերձ փոքր հողակտորների վրա հիմնական մշակաբույսերի աճեցման համար անհրաժեշտ ջրի կարիքները:

(ii) <u>Փոքր և միջին ոռոգման բաշխման համակարգերի բարելավում (ՓՄՈԲՀԲ):</u> Ծրագիրը, պահանջարկի վրա հիմնված ծրագրային մոտեցման վրա, կֆինանսավորի ոռոգման երրորդ կարգի ենթակառուցվածքների շինարարությունը կամ վերականգնումը՝ բարելավելու ջրի բաշխման արդյունավետությունը՝ փոքր սեփականատերերի ոռոգվող հողամասերի արտադրողականությունը բարձրացնելու նպատակով:

4.3 **<u>Ֆերմերների իրազեկման և աջակցության բաղադրիչ:</u>** Այս բաղադրիչը (i) կնպաստի ԳՏՋՈԵԲ ենթածրագրերի ընտրությանն աջակցելու նպատակով սոցիալական և ագրոնոմիական թեմաներով մանրամասն ուսումնասիրությունների կազմմանը, (ii) կբարձրացնի ֆերմերների իրազեկումը՝ զարգացման հնարավորությունների ընդլայնման միջոցով, (iii) կզարգացնի ֆերմերների կարողությունները՝ Ծրագրի շրջանակներում բարելավված ենթակառուցվածքների ընձեռած հնարավորությունների լիարժեք օգտագործման վերաբերյալ ուսուցման միջոցով, ներառյալ տնային տնտեսություններ ղեկավարող կանանց և

երիտասարդներին, և (iv) կտրամադրի ուսուցում գործարար և ֆինանսական պլանավորման բնագավառում:

4.4 **<u>Ծրագրի կառավարման բաղադրիչ</u>**: Այս բաղադրիչը նախատեսված է Ծրագրի իրականցման ընթացքում ԾԻԳ-ի աշխատակիցների աշխատավարձերը և գործառնական ծախսերը վճարելու համար, ներառյալ՝ կարողությունների ստեղծման և ԾԻԳ-ի աշխատակազմի զարգացման միջոցառումների, մեկնարկի աշխատաժողովի, տարեկան վերլուծության և նախագծման աշխատաժողովների, արդյունքների և ազդեցության մոնիտորինգի, բազային հետազոտության և վերջնական ազդեցության հետազոտությունների, ինչպես նաև Ծրագրի իրականացման համար համապատասխան ուսումնասիրությունների հետ կապված ծախսերը:

II. Ծրագրի իրականացում

Ա. Ընդհանուր

5. <u>Ծրագրի ղեկավար խորհուրդ (ԾՂԽ)</u>

Կհիմնվի ԳՀՄՀ-ի կողմից ընդունելի կազմով Ծրագրի ղեկավար խորհուրդ, որը կկրի Ծրագրի կառավարման և իրականացման ընդհանուր պատասխանատվությունը: ԾՂԽ-ն հաշվետու կլինի Ծրագրի գլխավոր գործակալությանը (ԾԳԳ):

6. <u>Ծրագրի իրականացման գրասենյակ (ԾԻԳ)</u>

Կընդունվի կառավարության որոշում, որով պետք է հաստատվի, որ ընթացիկ <<Գյուղական կարողությունների ստեղծում ծրագրի>> (ԳԿՍԾ) իրականացման գրասենյակը, որը մասամբ ֆինանսավորվում է Հիմնադրամի կողմից՝ 2010թ. նոյեմբերի 30-ով թվագրված Ծրագրի ֆինանսավորման համաձայնագրի շրջանակներում պետք է կրի վարչական, ֆինանսական և գործառնական պատասխանատվություն Ծրագրի իրականացման համար: ԾԻԳ-ը կգործի ԾԳԳ-ի և ԾՂԽ-ի ղեկավարության ներքո:

7. <u>Ծրագրի իրականացման ձեռնարկ (ԾԻՁ)</u>

Ծրագիրը կիրականացվի՝ համաձայն Ծրագրի իրականացման ձեռնարկի, որի դրույթները կներկայացվեն ԳՀՄՀ-ի հավանությանը: ԾԻՁ-ը այլ դրույթների հետ մեկտեղ կներառի հետևյալը.

(i) Ֆինանսական կառավարման և հաշվետվություններ կազմելու/ներկայացնելու կարգավորումներ, ներառյալ՝ ֆինանսական հաշվետվությունները, ներքին հսկողությունը, հիմնական միջոցների կառավարումը և աուդիտի կարգավորումները,

(ii) ԳՏՋՈԵԲ բաղադրիչի ենթածրագրերի ընտրության և հաստատման գործընթացներ:

Բ. Բաղադրիչների կառավարումը

8. Գյուղական ֆինանսավորման բաղադրիչ

8.1. **ԳՖԿ վերաֆինանսավորման ենթաբաղադրիչ:** Այս ենթաբաղադրիչը կիրականացվի ԳՖԿ-ի կողմից, որն առանձին, ինքնուրույն միավոր է ԾԻԳ-ի կառուցվածքում և հանդիսանում է ԳՀՄՀ-ի փոխառության միջոցներով ֆինանսավորվող Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրի ներքո Փոխառուի կողմից հիմնված անկախ կառույցի իրավահաջորդը: ԳՖԿ-ն ղեկավարվում է իրավական կանոնակարգերով, որոնք սահմանում են ԳՖԿ-ի ինքնուրույն կարգավիճակն ու կառավարման կառուցվածքը և ենթակա են ԳՀՄՀ-ի հաստատմանը: ԳՖԿ-ն իրականացնում է վարկավորման գործառնություններ՝ ԳՖԿ-ի Ներդրումային ուղեցույցի համաձայն, որը ենթակա է ԳՀՄՀ-ի կողմից հաստատման:

(ա) Վարկային խորհուրդ: Կստեղծվի Վարկային խորհուրդ՝ Հիմնադրամի համար ընդունելի կազմով: Վարկային խորհրդի վրա դրված կլինի վարկային հայտերի հաստատման ընդհանուր պատասխանատվությունը՝ համաձայն ԳՖԿ-ի Ներդրումային ուղեցույցի կանոնակարգերի:

(բ) Կառուցվածքը: ԳՖԿ-ն ղեկավարվում է ԳՖԿ-ի տնօրենի կողմից՝ համապատասխան աշխատակազմի աջակցությամբ: Թեկնածուներն առաջարկվում են ԳՖԿ-ի տնօրենի կողմից ՀՀ օրենսդրության համաձայն պաշտոնապես նշանակվելու համար, որը ենթակա է ԳՀՄՀ-ի կողմից նախօրոք հաստատման:

(գ) ԳՖԿ-ի տնօրեն: ԳՖԿ-ի տնօրենն ունի լրիվ և բացառիկ իրավասություն ու լիազորություններ՝ կառավարելու ԳՖԿ-ի գործառնությունները և ռեսուրսները՝ ԳՖԿ-ի Ներդրումային ուղեցույցի ու իրավական կանոնակարգերի համաձայն: ԳՖԿ-ի տնօրենի նշանակումն ու ազատումը ենթակա է ԳՀՄՀ-ի կողմից նախօրոք հաստատման:

(դ) ԳՖԿ-ի Եռակողմ համաձայնագիր: Փոխառուն կկնքի Եռակողմ համաձայնագիր ԳՖԿ-ի և յուրաքանչյուր ՄՖԿ-ի հետ, որտեղ կսահմանվեն, ի լրումն այլ կետերի, այն դրույթներն ու պայմանները, ըստ որի Փոխառության գումարները ԳՖԿ-ի միջոցով կփոխանցվեն Մասնակից ֆինանսական կառույցներին որպես ֆինանսավորում՝ ի կատարումն Ծրագրի նպատակների:

(ե) Փոխըմբռնման հուշագիրը: Փոխառուն ԳՖԿ-ի հետ կստորագրի Փոխըմբռնման հուշագիր՝ սահմանելու համար այն պայմանները, որոնցով Փոխառության գումարները կտրվեն ԳՖԿ-ին: Փոխառուն կտրամադրի Փոխառության գումարները ԳՖԿ-ին ԱՄՆԴ-ով: ԳՖԿ-ն Փոխառուին կվճարի 2% տոկոսագումար՝ Փոխառուի կողմից ստացած գումարների մնացորդի համար:

(զ) ԳՖԿ-ի Շրջանառու միջոցների հաշիվները: ԳՖԿ-ն կվարի Շրջանառու միջոցների հաշիվներ, որտեղ կկուտակվեն Ծրագրի շահառուներին Փոխառության միջոցներով (ուղղակի կամ անուղղակի) տրամադրած վարկերից ստացված բոլոր զուտ հասույթները: Կարող են բացվել Շրջանառու միջոցների մի քանի հաշիվներ՝ ամորտիզացիոն վճարումները և վարկերից ստացված տոկոսագումարներն առանձին հաշիվներում պահելու նպատակով: ԳՖԿ-ն կօգտագործի տվյալ Շրջանառու միջոցների հաշիվը՝ Ծրագրի շահառուների հետագա վարկավորման համար՝ ըստ սույն Համաձայնագրի, մինչև կկատարվեն Փոխառության սպասարկման բոլոր վճարումները, եթե այլ կերպ չի որոշվի Փոխառուի և Հիմնադրամի կողմից: Սույն պարբերության մեջ <զուտ հասույթ> նշանակում է վերադարձված մայր գումարները և բոլոր վճարված տոկոսագումարները՝ հանած հիմնավորված գործառնական և այլ ծախսերը:

8.2. **ՀԳՏՏՋՀ ենթաբաղադրիչը**: Այս ենթաբաղադրիչը կիրականացվի ՀԳՏՏՋՀ-ի կողմից, որը ԳՋՄՀ փոխառության միջոցով ֆինանսավորված <<Շուկայավարման հնարավորություն ֆերմերներին>> ծրագրի շրջանակում ստեղծված հիմնադրամ է: ՀԳՏՏՋՀ-ի աշխատանքները ղեկավարվում են ՀՀ հիմնադրամներին առնչվող օրենքների և կանոնակարգերի համաձայն, ինչպես նաև իր Կանոնադրությամբ: ՀԳՏՏՋՀ-ի կանոնադրությունը, որը ենթակա է ԳՋՄՀ-ի հաստատմանը, սահմանում է, որ հիմնադրամի նպատակն է հանդիսանում աղքատության նվազեցումը Հայաստանի գյուղական տարածքների տնտեսական զարգացման միջոցով, և որ այն կարող է շահույթ ստանալ ընկերություններում կատարված առանձին ներդրումների արդյունքում, քանի դեռ այն շարունակաբար վերաներդնում է իր եկամուտները գյուղական տարածքների զարգացմանը նպատակաուղղված նոր ներդրումների մեջ:

(ա) ՀԳՏՏՋՀ-ի Հոգաբարձուների խորհուրդը: ՀԳՏՏՋՀ-ը ղեկավարվում է Հոգաբարձուների խորհրդի կողմից, որի կազմում են կառավարության ներկայացուցիչներ և մասնավոր ոլորտի բարձր որակավորում ունեցող

ներկայացուցիչներ, ներառյալ՝ ֆինանսական, իրավական, շուկայավարման, բիզնեսի և գյուղական զարգացման փորձագետներ: Մասնավոր ոլորտի ներկայացուցիչները կկազմեն Հոգաբարձուների խորհրդի անդամների մեծամասնությունը: Հոգաբարձուների խորհուրդը պետք է ապահովի ՀԳՏՏՋՀ-ի ընդհանուր քաղաքականության և ռազմավարության ուղղորդումը: Փոխառուն նշանակում է Հոգաբարձուների խորհրդի անդամներին՝ նախապես համաձայնեցնելով ԳՋՄՀ-ի հետ: Չնայած ՀԳՏՏՋՀ-ի Խորհրդի անդամները նշանակվում են Փոխառուի կողմից, ՀԳՏՏՋՀ-ը՝ ի դեմս ՀԳՏՏՋՀ հիմնադրամի տնօրենի, կունենա գործելու լիակատար անկախություն՝ համաձայն իր հաստատված Կանոնադրության:

(բ) Կառուցվածքը: ՀԳՏՏՋՀ-ն ղեկավարվում է ՀԳՏՏՋՀ-ի տնօրենի կողմից՝ համապատասխան աշխատակազմի աջակցությամբ, որը համալրվում է ՀԳՏՏՋՀ-ի տնօրենի կողմից նախապես համաձայնեցնելով ԳՋՄՀ-ի հետ: ՀԳՏՏՋՀ-ի տնօրենը նշանակվում է ՀԳՏՏՋՀ-ի Հոգաբարձուների խորհրդի կողմից: ՀԳՏՏՋՀ-ի տնօրենի նշանակումն ու ազատումը ենթակա է ԳՋՄՀ-ի կողմից նախապես հաստատման: ՀԳՏՏՋՀ-ի տնօրենը պետք է ունենա ԳՋՄՀ-ի կողմից ընդունելի որակավորումներ և փորձ: Պատասխանատվությունները ներառում են ՀԳՏՏՋՀ-ի ընդհանուր ղեկավարումը, ուղղորդումը և կառավարումը՝ համաձայն սույն Ֆինանսավորման համաձայնագրի, ՀԳՏՏՋՀ-ի Կանոնադրության և ՀԳՏՏՋՀ-ի Սուբսիդավորման համաձայնագրի դրույթների: ՀԳՏՏՋՀ-ի տնօրենը կգործի որպես Հոգաբարձուների խորհրդի քարտուղար:

(գ) Ներդրումները: ՀԳՏՏՋՀ-ի ներդրումային բոլոր որոշումները կկայացվեն անկախ՝ իր հաստատված Կանոնադրության ու ՀԳՏՏՋՀ-ի ներդրումային ընթացակարգերի և ուղեցույցների համաձայն, որոնք հաստատված են ԳՋՄՀ-ի կողմից: Ներդրումային որոշումները կկայացվեն Հոգաբարձուների խորհրդի կողմից նշանակված, բարձր մասնագիտական կարողություններ ունեցող կոմիտեի կողմից և կհաստատվեն ԳՋՄՀ-ի կողմից: Ներդրումային կոմիտեի անդամների մեծամասնությունը պետք է կազմեն հրավիրված փորձագետները: ՀԳՏՏՋՀ-ի ներդրումները վերջին հաշվով կօգտագործվեն ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերման նպատակով, ինչպես սահմանված է ՀԳՏՏՋՀ-ի ներդրումային ուղեցույցներում և ընթացակարգերում:

(դ) ՀԳՏՏՋՀ-ի Սուբսիդավորման համաձայնագիրը: Փոխառուն ՀԳՏՏՋՀ-ի հետ կկնքի Սուբսիդավորման համաձայնագիր, որը, ի լրումն այլ կետերի, կսահմանի այն դրույթներն ու պայմանները, ըստ որի Փոխառության գումարները կփոխանցվեն Փոխառուի կողմից ՀԳՏՏՋՀ-ին՝ ի կատարումն Ծրագրի նպատակների: Փոխառուն կտրամադրի Փոխառության գումարները ՀՀ դրամով՝ ՀԳՏՏՋՀ-ի գործառնությունների իրականացման համար: ՀԳՏՏՋՀ-ը Փոխառուին կվճարի 3% տոկոսագումար՝ Փոխառուի կողմից ստացած գումարների մնացորդի համար

(ե) ԾԻԳ-ը կկնքի Շրջանակային համաձայնագիր ՀԳՏՏՋՀ-ի հետ, որը կսահմանի ԾԻԳ-ի և ՀԳՏՏՋՀ-ի միջև համագործակցության դրույթներն ու պայմանները՝ ի կատարումն Ծրագրի նպատակների: Շրջանակային համաձայնագիրը ենթակա է ԳՋՄՀ-ի կողմից նախապես հաստատման:

(զ) ՀԳՏՏՋՀ-ի Շրջանառու միջոցների հաշիվ: ՀԳՏՏՋՀ-ը կվարի Շրջանառու միջոցների հաշիվ, որում կկուտակվեն ՀԳՏՏՋՀ-ի ներդրումներից ստացված բոլոր զուտ հասույթները: ՀԳՏՏՋՀ-ը կօգտագործի տվյալ Շրջանառու միջոցների հաշիվը՝ ներդրումների հետագա ֆինանսավորման համար՝ ըստ սույն Ֆինանսավորման համաձայնագրի, մինչև կկատարվեն Փոխառության սպասարկման բոլոր վճարումները, եթե այլ կերպ չի որոշվի Փոխառուի և ԳՋՄՀ-ի կողմից: Սույն պարբերության մեջ <<զուտ հասույթ>> նշանակում է ներդրումներից ստացված բոլոր հասույթները, հանած ՀԳՏՏՋՀ-ի հիմնավորված գործառնական և այլ ծախսերը:

8.3. **Գյուղական տարածքների ջրամատակարարման և ոռոգման ենթակառուցվածքների բարելավում (ԳՏՋՈԵԲ) բաղադրիչ:** Այս բաղադրիչը կիրականացվի ԾԻԳ-ի կողմից: ԾԻԳ-ը կապահովի իրականացման որակը և կխթանի համապատասխան տեխնոլոգիաների կիրառումը՝ Ծրագրի ենթակառուցվածքների բարելավմանն ուղղված ներդրումների իրականացման նպատակով: Պետք է որդեգրվի ծրագրային մոտեցում, ըստ որի ծրագրային աշխատանքները նախապես չեն սահմանվի նախքան գործառնությունների սկիզբը, այլ պարբերաբար կընտրվեն Ծրագրի իրականացման ընթացքում՝ հիմնվելով ԳՋՄՀ-ի և Փոխառուի միջև համաձայնեցված չափանիշների, ինչպես նաև մասնակից համայնքների կողմից ներկայացված պահանջի վրա: Նշված չափանիշները ներառված են ԾԻՁ-ի մեջ, որի շրջանակներում սահմանված ընթացակարգերի իրականացմանը վերաբերող ցանկացած փոփոխություն ենթակա է ԳՋՄՀ-ի կողմից հաստատման:

8.4. **Ֆերմերների իրազեկման և աջակցության բաղադրիչ:** ԾԻԳ-ը, ըստ ԳՋՄՀ-ի գնումների ուղեցույցի, կընտրի ծառայություն մատուցող գործընկեր կամ գործընկերներ, հետևյալ նպատակներն իրականացնելու համար. i) խթանել ԳՏՋՈԵԲ ներդրումների որոշման գործընթացը, (ii) բարձրացնել ֆերմերների իրազեկվածությունը՝ ընդլայնելով նրանց զարգացման հնարավորությունները, (iii) տրամադրել խորհրդատվական ծառայություններ և ուսուցում, ինչպես սահմանված է ԾԻՁ-ում: ԾԻԳ-ը, ԳՋՄՀ-ի գնումների ուղեցույցին համապատասխան, նաև կընտրի ֆինանսական ուսուցման ոլորտում ծառայություն մատուցող գործընկեր, որը կտրամադրի ուսուցում ֆինանսական ոլորտում:

ԾԻԳ-ը, ըստ անհրաժեշտության, կստեղծի աշխատանքային խմբեր մարզային մակարդակով՝ տարբեր մարզերում ֆերմերների աջակցությամբ զբաղվող

գործընկերներին միավորելու նպատակով, որը կհեշտացնի տեսակետների փոխանակումը և կստեղծի համագործակցության հարթակ ծառայություններ մատուցողների համար:

Աղդիր 2

Գումարների բաշխման աղյուսակ

1. *Փոխառության և դրամաշնորհի գումարների բաշխումը: (ա)* Ստորև նշված աղյուսակում ամրագրվում են ընդունելի ծախսերի այն կատեգորիաները, որոնք ֆինանսավորվելու են Փոխառությունից և Դրամաշնորհից, Փոխառության ու Դրամաշնորհի գումարների բաշխումը՝ ըստ կատեգորիաների, ինչպես նաև յուրաքանչյուր կատեգորիայի ծախսերի ֆինանսավորվելիք տոկոսը:

Կատեգորիա	Փոխառությունից բաշխված գումար (ՀՓԻ)	Դրամաշնորհից բաշխված գումար ՀՓԻ)	Տոկոսն առանց հարկի, կառավարության և շահառուների ներդրումը
I) Ապրանքներ և ծառայություններ, ներառյալ սարքավորումներ	510 000	229 000	100%
II) Փոխադրամիջոցներ	30 000		100%
III) Խորհրդատվություն	165 000		100%
IV) Ներդրումային կապիտալ 1 (ԳՖԿ)	2 060 000		100%
V) Ներդրումային կապիտալ 2 (ՀԳՏՏԶՀ)	3 060 000		
VI) Գործառնական ծախսեր	350 000		32%
VII) Աշխատավարձ և հավելավճարներ	305 000		32%
Չբաշխված	710 000		
ԸՆԴԱՄԵՆԸ	7 190 000	229 000	

(բ) Վերոհիշյալ աղյուսակում օգտագործված տերմինների նշանակությունը նկարագրված է ստորև.

Կատեգորիա I. <<Ապրանքներ և ծառայություններ, ներառյալ սարքավորումներ>>: Ենթադրում է Ծրագրի կառավարման բաղադրիչի ներքո ԾԻԳ-ի գրասենյակային սարքավորումների համար թույլատրելի ծախսերը և ֆերմերների իրազեկության բարձրացման ուսուցման հետ առնչվող թույլատրելի ծախսերը, ներառյալ՝ ծառայության մատուցման վճարները, որոնք կատարվելու են ծառայություն մատուցողների կողմից Ֆերմերների իրազեկման և աջակցության բաղադրիչի շրջանակում:

Կատեգորիա II. <<Փոխադրամիջոցներ>>: Ենթադրում է Ծրագրի կառավարման բաղադրիչի շրջանակում ԾԻԳ-ի փոխադրամիջոցներին առնչվող թույլատրելի ծախսերը:

Կատեգորիա III. <<Խորհրդատվություն>>: Ենթադրում է ուսուցման, տեխնիկական աջակցության և այլ խորհրդատվական ծառայությունների թույլատրելի ծախսեր, որոնք կատարվելու են ԾԻԳ-ի կողմից Ծրագրի կառավարման բաղադրիչի շրջանակում:

Կատեգորիա IV և V. <<Ներդրումային կապիտալ>>: Ենթադրում է թույլատրելի ծախսեր, որոնք առնչվում են հետևյալին. i) վերաֆինանսավորման ներդրումային կապիտալ՝ որը կկատարվի ԳՖԿ-ի կողմից ՝ համաձայն ԳԶՄՀ-ի կողմից հաստատված ԳՖԿ-ի վարկավորման ուղեցույցի, և ii) Գյուղական ֆինանսավորման բաղադրիչի շրջանակում բաժնեմասնակցային և մեզանին (միջանկյալ) ներդրումներ և ենթավարկեր, որն իրականացնելու է ՀԳՏՏԶՀ-ը՝ համաձայն ԳԶՄՀ-ի կողմից հաստատված ՀԳՏՏԶՀ--ի ներդրումային ուղեցույցի:

Կատեգորիա IV. <<Գործառնական ծախսեր>>: Ենթադրում է Ծրագրի շրջանակում ընթացիկ թույլատրելի ծախսերը:

Կատեգորիա VII. <<Աշխատավարձ և հավելավճարներ>>: Ենթադրում է ԾԻԳ-ի աշխատակազմի աշխատավարձի և հավելավճարների հետ կապված թույլատրելի ծախսերը:

2. *Մեկնարկային ծախսեր:* <<Խորհրդատվություն>> կատեգորիայի շրջանակում մեկնարկային ծախսերի մասհանումները, որոնք կատարվում են նախքան մասհանման պայմանների բավարարելը, չեն կարող գերազանցել 35.000 ՀՓԻ հանրագումարը (մոտավորապես 50.000 ԱՄՆԴ):

Առդիր 3

Հատուկ պայմաններ

Ընդհանուր պայմանների 12.01(ա)(xxiii) բաժնին համապատասխան՝ ԳՀՄՀ-ն կարող է մասամբ կամ ամբողջովին կասեցնել Փոխառուի վարկային և դրամաշնորհային հաշիվներից մասհանման հայտ ներկայացնելու իրավունքը, եթե Փոխառուն թերացել է ստորև սահմանված որևէ պայմանի կատարման հարցում, և ԳՀՄՀ-ն որոշել է, որ նման թերացումը բացասական նյութական ազդեցություն է ունեցել կամ կարող է ունենալ Ծրագրի վրա:

1. Խարդախություն և կոռուպցիա: Փոխառուն անմիջապես պետք է ԳՀՄՀ-ի ուշադրությանը ներկայացնի Ծրագրի իրականացմանն առնչվող, իրեն հայտնի խարդախության և/կամ կոռուպցիայի վերաբերյալ ցանկացած հայտարարություն կամ մտահոգություն:

2. Արտաքին աուդիտորներ: Փոխառուն ԾԻԳ-ի միջոցով կնշանակի ԳՀՄՀ-ի կողմից ընդունելի անկախ աուդիտորների՝ ԳՀՄՀ-ի կողմից հաստատված Առաջադրանքի պայմանների շրջանակում և Ծրագրի աուդիտների վերաբերյալ ԳՀՄՀ-ի ուղեցույցին համապատասխան: Ամբողջ ծրագրի տարեկան աուդիտ անցած կոնսոլիդացված/համախմբված/ֆինանսական հաշվետվությունը ներքին հսկողության վերաբերյալ աուդիտի դիտողություններով ղեկավարությանն ուղղված նամակի հետ համատեղ պետք է ներկայացվի ԳՀՄՀ-ին ֆիսկալ տարվա ավարտից հետո վեց (6) ամսվա ընթացքում: Ավելին, Փոխառուն պետք է ապահովի, որ անկախ աուդիտորներից պահանջվի տրամադրել հավաստիացում ՀԳՏՏՋՀ հիմնադրամի կողմից գործածվող ներքին հսկողության ընթացակարգերի վերաբերյալ, համապատասխան ֆոնդերից փոխանցումները հիմնավորող փաստաթղթերի պատշաճության և ներդրումային հաշիվների գործածման վերաբերյալ, ինչպես նաև թե արդյոք Ծրագրի միջոցները օգտագործվել են՝ ԳՀՄՀ-ի կողմից հաստատված ՀԳՏՏՋՀ հիմնադրամի ներդրումային ուղեցույցին և սույն Համաձայնագրին համապատասխան: Փոխառուն նաև պետք է ապահովի, որ անկախ աուդիտորներից պահանջվի տրամադրել հավաստիացում՝ ԳՖԿ-ի կողմից գործածվող ներքին հսկողության ընթացակարգերի, համապատասխան ֆոնդերից փոխանցումները հիմնավորող փաստաթղթերի պատշաճության, վարկավորման և շրջանառու միջոցների հաշիվների գործածման վերաբերյալ, ինչպես նաև թե արդյոք Ծրագրի միջոցները օգտագործվել են՝ ԳՀՄՀ-ի կողմից հաստատված ԳՖԿ-ի ներդրումային ուղեցույցին և սույն Համաձայնագրին համապատասխան:

3. Ծրագրի փոխադրամիջոցների և այլ սարքավորումների օգտագործումը: Փոխառուն պետք է ապահովի հետևյալը.

(ա) Ծրագրի շրջանակում գնված բոլոր փոխադրամիջոցները և այլ սարքավորումները պետք է տրամադրվեն Ծրագրի կողմերին՝ Ծրագրի իրականացման նպատակով,
(բ) Ծրագրի շրջանակում գնված փոխադրամիջոցների և այլ սարքավորումների տեսակները պետք է համապատասխանեն Ծրագրի կարիքներին, և
(գ) Ծրագրի շրջանակում գնված կամ Ծրագրին տրամադրված բոլոր փոխադրամիջոցները և այլ սարքավորումները նախատեսված են միմիայն Ծրագրի օգտագործման համար:

4. Ծրագրի աշխատակազմի ապահովագրությունը: ԾԻԳ-ը կապահովագրի Ծրագրի աշխատակազմին առողջության և դժբախտ պատահարների ռիսկերից՝ պետական աշխատողների համար սահմանված կարգի համաձայն:
5. ՀԳՏՏՋՀ հիմնադրամի, ԳՖԿ-ի և ԾԻԳ-ի աշխատակազմի աշխատավարձը պետք է սահմանվի այն չափով, որը թույլ կտա ներգրավել և պահել կոմպետենտ աշխատակազմ՝ համաձայն Ծրագրի նախագծի հաշվարկներին:

6. Հարկերից ազատումը: ԳՋՄՀ փոխառության և դրամաշնորհային գումարները չեն կարող օգտագործվել սոցիալական ապահովության հիմնադրամին ուղղված՝ Ծրագրի աշխատակազմի գծով սոցիալական ապահովության վճարների կատարման նպատակով:

7. Փոխառուն պետք է ապահովի, որ ԳՖԿ-ի վերաֆինանսավորման ուղղված ողջ ներդումային կապիտալը, ինչպես նաև ՀԳՏՏՋՀ հիմնադրամի կողմից կատարվելիք բաժնեմասնակցային, մեզանին ներդրումները և ենթավարկերը տեղաբաշխվեն ՀԳՏՏՋՀ հիմնադրամի ներդրումային աճողական հաշվից և ԳՖԿ-ի վարկային աճողական հաշիվներից, ինչպես նաև վերադարձվեն ՀԳՏՏՋՀ հիմնադրամի ներդրումային հաշվին և ԳՖԿ-ի շրջանառու միջոցների հաշիվներին, որոնք համապատասխանաբար գործարկվում են ՀԳՏՏՋՀ հիմնադրամի և ԳՖԿ-ի կողմից:

8. Ծրագրի իրականացման ողջ ընթացքում Փոխառուն պետք է ապահովի, որ շինարարական բոլոր աշխատանքները, Ծրագրի նպատակներով գնված սարքավորումները և ծառայություններն ազատվեն բոլոր տեսակի մաքսային տուրքերից կամ հարկերից:

9. Ծրագրի իրականացման ժամանակահատվածում ԳՋՄՀ-ն և ՆԱԵԿ ՄՋՀ-ը պետք է հաստատեն Գյուղական տարածքների ջրամատակարարման և ոռոգման ենթակառուցվածքների (ԳՏՋԵ) բաղադրիչի հատուկ ենթածրագրերի ընտրությունը՝ ըստ ԾԻՁ-ում սահմանված չափանիշների: